ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԵՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Սոցիալիստական հասարակության հզորությունը բնորոշվում է ոչ միայն մարդկանց նյութական բարեկեցությամբ, այլև նրանց հոգևոր կյանքի առաջադիմությամբ:

Հասարակական գիտության մեծագույն նվաճումն է հանդիսանում մարքսիզմ-լենինիզմի տեսությունը: Մարքսի, Էնգելսի, Լենինի տեսական ժառանգությունը հանդիսանում է աշխարհի հեղափոխական վերակառուցման և գիտական ճանաչողության հզոր զենքը: Սակայն հեղափոխական տեսությունը չի կարող անշարժ մնալ միևնույն վիճակում. այն հասարակական փորձի և գիտական նոր երևույթների ու տենդենցների խոր վերլուծության հիման վրա անընդհատ զարգանում է՝ տալով հասարակության կյանքին նոր, ավելի առաջադիմական ուղղություններ:

Ներկա ժամանակում, երբ ամբողջ աշխարհում տեղի է ունենում սուր պայքար ռեակցիոն և առաջադիմական ուժերի միջև, կարևոր է գիտականորեն մեկնաբանել այդ երևույթները և հիշա ուղղություն տալ հեղափոխական շարժումներին ու սոցիալիստական շինարարությանը:

Հենվելով սոցիալիստական պետության զարգացման պատմական փորձի վրա, մեր կուսակցությունը նոր, առաջադիմական բայլեր է արել այնպիսի կարևոր տեսական պրոբլեմների մշակման ուղղությամբ, ինչպիսին են՝ բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքը, հեղափոխության մեջ կուսակցության ղեկավար դերը, հեղափոխության խաղաղ և ոչ խաղաղ ուղիները, տարբեր սոցիալական կառուցվածք ունեցող պետությունների խաղաղ գոյակցությունը, սոցիալիստական էկոնոմիկայի պլանաչափ զարգացումը և այլն:

Կոմունիզմի կառուցումը, համաշխարհային հեղափոխական պրոցեսը, գիտա-տեխնիկական հեղափոխությունը, գաղափարական պայքարի արդի սրությունը առաջադրում են տեսական և պրակտիկ նոր խնդիրներ, որոնց լուծումից են կախված սոցիալիզմի հաջողությունները, մարդկության հետագա առաջընթացը:

Այդ պրոբլեմների ճիշտ, գիտական հիմնավորվածությամբ լուծումը հնարավոր է միայն ստեղծագործական մարքսիզմի, մարքս-լենինյան հասարակագիտության ամբողջ սիստեմի արդյունավետ զարգացման հիման վրա:

Հսկայական նշանակություն տալով հասարակական գիտություններին, ՍՄԿԿ Կենտկոմը 1967 թ. օգոստոսի 14-ին որոշում ընդունեց «Հասարակական գիտությունների հետագա զարգացման և կոմունիզմի կառուցման մեջ նրանց դերի բարձրացման մասին»: Մեր կուսակցության այդ ծրագրային փաստաթուղթը մշակված է ՍՄԿԿ XXIII համագումարի որոշումներին համապատասխան: Համագումարի հաշվետու զեկուցման մեջ հասարակական գիտությունների մասին նշված է. «Հասարակական գիտությունների զարգացումը և նրանց հանձնարարականների ներդրումը պրակտիկայում, խաղում են ոչ պակաս կարևոր դեր, քան բնական գիտությունների նվաճումների օգտագործումը նյու-

թական արտադրության և ժողովրդի հոգևոր կյանքի զարգացման ասպարեզում»:

Հասարակական գիտությունների մասին ՍՄԿԿ Կենտկոմի որոշումը հրատապ նշանակություն ունի մարքս-լենինյան ուսմունքի, նրա երեք բաղկացուցիչ մասերի՝ փիլիսոփայության, քաղաքատնտեսության և գիտական կոմունիզմի հետագա զարգացման համար:

ՍՄԿԿ ծրագիրը, կուսակցության XXIII համագումարի որոշումները, կուսակցության և կառավարության ձեռնարկած միջոցառումները սովետական ժողովրդի առջև դրել են մեծ խնդիրներ՝ տնտեսական, քաղաքական և կուլտուրական շինարարության բնագավառներում հարաճուն վերելք ստեղծելու համար: Այդ խնդիրների կատարումը առանց գիտության նվաճումների օգտագործման, անհնարին է: Հասարակական գիտությունները կոչված են նպաստելու կոմունիստական կուսակցությանը, մեր հասարակարգի օբյեկտիվ օրինաչափությունների օգտագործման հիմքի վրա, նախանշելու կոմունիզմի կառուցման հիշտ ուղիները:

Մեր կուսակցության տեսական, գաղափարական աշխատանքը ուղղված է կոմունիզմի նյութատեխնիկական բազայի ստեղծման, հասարակական հարաբերությունների հետագա կատարելագործման, աշխատավորների կոմունիստական դաստիարակության գործում ՍՄԿԿ ծրագրով նախատեսված խնդիրների իրականացմանը: Կոմունիզմի կառուցման ժամանակակից էտապի այս միմյանց հետ շաղկապված խնդիրների իրականացումը պայմանավորված է մի խումբ կոմպլեքս պրոբլեմներով, որոնք պետք է մշակեն հասարակական գիտությունները:

ՍՄԿԿ Կենտկոմի որոշման մեջ նշված են այն ուղղությունները, որ հասարակական գիտությունները պետք է ծավալեն իրենց գիտահետազոտական աշխատանքները կոմունիզմի կառուցման ներկա էտապում: Տնտեսական գիտության բնագավառում գիտնականների առջև խնդիր է դրվում բազմակողմանիորեն բացահայտել սոցիալիզմի քաղաքատնտեսության օրենքները ու կատեգորիաները, հետազոտել կոմունիզմի նյութատեխնիկական բազայի ստեղծման և կոմունիստական արտադրական հարաբերությունների ձևավորման տնտեսական պրոբլեմները, մշակել գիտական հանձնարարականներ, ժամանակակից էտապում տնտեսական քաղաքականության նոր սկզբունքներ հասարակական արտադրության շահավետության բարձրացման, արտադրողական ուժերի ռացիոնալ տեղաբաշխման, երկրի աշխատանքային ռեսուրսների օգտագործման վերաբերյալ: Ուսումնասիրել տեխնիկական առաջադիմության տնտեսական պրոբլեմները, հետազոտել սոցիալիստական երկրների տնտեսական համագործակցության ձևերն ու մեթոդները, բացահայտել ժամանակակից կապիտալիզմի տնտեսության մեջ առաջացած նոր երևույթները, հետազոտել իմպերիալիզմի սոցիալ-տնտեսական հակասությունները և այլ հարցեր:

Հայաստանի տնտեսագետների գիտահետազոտական աշխատանքներում 1968 թ. գլխավոր տեղ է հատկացվել այնպիսի սեսական և գործնական պրոբլեմներին, ինչպիսին են սոցիալիստական արտադրության արդյունավետության բարձրացման հարցերը հանրապետությունում: Դրանք են՝ արտադրության կառուցվածքի առաջադիմական տեղաշարժերը, կապիտալ ներդրումների և հիմնական ֆոնդերի տնտեսական արդյունավետության բարձրացումը, աշխատանքային ռեսուրսների ռացիոնալ օգտագործումը, արտադրության

նյութական խթանման հարցերը: Տնտեսագիտության ինստիտուտի շատ հետազոտություններ կոնկրետ կիրառվում են հանրապետության արտադրական ձեռնարկություններում. օրինակ, պլանավորման ու տնտեսական խթանման նոր սիստեմին անցնելու համար՝ Երևանի փորձնական էլեկտրատեխնիկական գործարանում ներդրվել է տնտեսագետների մշակած ներգործարանային տնտհաշվարկը:

Այժմ իրականացվում է տնտեսական ռեֆորմը հասարակական արտադրության բոլոր բնագավառներում, որը հսկայական թափ է հաղորդել ժողովրդական տնտեսության էլ ավելի զարգացմանը, կոմունիզմի նյութատեխնիկական բազայի ստեղծմանը, դրա հետ միասին՝ աշխատավորության գաղափարական աճին: Տնտեսագետների խնդիրն է՝ հետազոտել այդ նոր երևույթները, ընդհանրացնել եղած փորձը և տեսական հարցերի հետ միաժամանակ կոնկրետ հանձնարարականներ մշակել տնտեսական ռեֆորմի հիշտ կիրառման, հասարակական արտադրության մեջ աշխատավորների նյութական շահագրգռվածության բարձրացման, արտադրության ռացիոնալ կազմակերպման, նրա շահավետության բարձրացման և այլ հարցերի մասին:

Կոմունիզմի նյութատեխնիկական բազայի ստեղծման, տնտեսական նոր պրոբլեմների իրականացման հետ միաժամանակ տեղի է ունենում սոցիալիստական հասարակական հարաբերությունների կատարելագործում:

Գիտական կոմունիզմի բնագավառի գիտնականների առաջնահերթ խնդիրն է համարվում՝ ուսումնասիրել սոցիալիստական հեղափոխության լենինյան տեսությունը նոր էպոխայի տեսանկյունով, վերհանել համաշխարհային հեղափոխական պրոցեսի զարգացման օրինաչափությունները, վերլուծել միջազգային պրոլետարիատի դասակարգային պայքարը և ազգային-ազատագրական շարժումները, բացահայտել սոցիալիզմի և կապիտալիզմի հակասությունները. ուսումնասիրել սոցիալիզմի զարգացման և կոմունիզմի վերանման սոցիալ-քաղաքական պրոբլեմները, ազգային հարաբերությունների զարգացումը, սոցիալական պրոցեսների գիտական կառավարման մեթոդները և այլ հարցեր:

Փիլիսոփայական գիտությունների բնագավառում՝ ավելի խոր մշակել մատերիալիստական դիալեկտիկան, իմացության տեսությունն ու տրամաբանությունը, հասարակական, բնական ու տեխնիկական գիտությունների մեթոդաբանական պրոբլեմները, ուսումնասիրել ժամանակակից կապիտալիզմի հակասությունները և սոցիալիստական հասարակարգի դիալեկտիկան, հասարակական զարգացման օբյեկտիվ ու սուբյեկտիվ գործոնների հարաբերակցությունը, զարգացնել պատմական մատերիալիզմը, որպես ընդհանուր սոցիալական տեսություն, կատարել սոցիոլոգիական կոնկրետ հետազոտություններ, մշակել հասարակության սոցիալական կառուցվածքի, սոցիալիստական հասարակական հարաբերությունների կատարելագործման և դրանց կոմունիստական հասարակական հարաբերությունների վերանման պրոբլեմները, հետազոտել հասարակական գիտակցության օրինաչափությունները, տեսականորեն մշակել անհատի ու կոլեկտիվի, հասարակության և պետության, սոցիալիստական հումանիզմի, բարոյագիտության և գեղագիտության պրոբլեմները: Ակադեմիայի փիլիսոփայության և իրավունքի սեկտորի գիտահետազոտական աշխատանքի հիմնական խնդիրը անցած տարում վերաբերում է սոցիալիզմի զարգացման և կոմունիզմին անցնելու օրինաչափությունների դիալեկտիկային, պատմական մատերիալիզմին, հայ փիլիսոփայության պատմու-

թյանը, մարքս-լենինյան էսթետիկային, պետության և իրավունքի հարցերին: Մի շարք աշխատություններում մարքս-լենինյան մեթոդոլոգիայի հիման վրա ուսումնասիրվել են գիտակցական սկզբունքի դերը կոմունիստական հասարակական հարաբերությունների կազմավորման պրոցեսում, սոցիալիզմի զարգացման դիալեկտիկան, Հայկական պետության տնտեսական-կազմակերպական առանձնահատկությունների մի քանի հարցեր և այլն:

Հասարակական գիտությունների սիստեմում կարևոր տեղ է պատկանում պատմական գիտություններին: Պատմությունը հանդիսանում է տնտեսագիտության, փիլիսոփայության, իրավագիտության, էսթետիկայի և այլ հասարակական գիտությունների համար կարևոր աղբյուրներից մեկը: Պատմությունը հասարակական մյուս գիտություններին մատակարարում է անհրաժեշտ հիմնավոր փաստական նյութեր, որոնք ստուգված են անցյալի փորձով:

ՍՄԿԿ պատմությունը և այլ պատմական գիտություններ մեծ դեր են կատարում աշխատավորների մարքս-լենինյան աշխարհայացքի ձևավորման, նրանց դասակարգային պայքարի տրադիցիաներով դաստիարակելու գործում: Նրանք հետազոտում և ընդհանրացնում են կոմունիստական կուսակցության և սովետական ժողովրդի հսկայական փորձը՝ աշխարհում առաջինը հանդիսացող սոցիալիստական պետության ստեղծման, բանվոր դասակարգի հեղափոխական տեսության, ստրատեգիայի և տակտիկայի մշակման գործում: Պատմաբանները իրենց հետազոտություններում բացահայտում են պատմության մեջ ժողովրդական մասսաների դերը, աշխատավորների պայքարը սոցիալական և ազգային ճնշման դեմ, ցույց են տալիս սովետական ժողովրդի հերոսությունը Հոկտեմբերի նվաճումների պաշտպանության, երկրի սոցիալիստական ինդուստրացման, գյուղատնտեսության կոլեկտիվացման, կոմունիզմի նյութատեխնիկական բազայի ստեղծման ու սոցիալիստական հասարակական հարաբերությունների կատարելագործման համար մղած պայքարում: Նրանց հետազոտության բնագավառներից են նաև ժողովուրդների բարեկամությունը, ՍՍՀՄ-ի արտաքին քաղաքականությունը և միջազգային հարաբերությունները, միջազգային բանվորական և կոմունիստական շարժումների պատմությունը և այլ հարցեր:

ՀՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի գիտական հետազոտությունները տարվել են սոցիալիստական և կոմունիստական շինարարության պատմության, կապիտալիստական, ֆեոդալական, ստրկատիրական հասարակարգերի պատմության, հայ ժողովրդի պատմության բազմահատորյակի ստեղծման, պատմագրության, հայ պարբերական մամուլի պատմության պրոբլեմների գծով:

Պատմաբանների ուշադրության կենտրոնում է սոցիալիստական և կոմունիստական շինարարության պրոբլեմի ուսումնասիրությունը: Զգալի աշխատանք է տարվել մասնավորապես Հայաստանի բանվոր դասակարգի և կոլտնտեսային գյուղացիության պատմության հետազոտման գործում:

Մեր կուսակցությունը և սովետական կառավարությունը առանձնակի ուշադրություն են դարձնում Արևելքի ժողովուրդների հետ բարի դրացիական կապերի ամրապնդմանը: Ակադեմիայի արևելագիտության սեկտորի գիտահետազոտական աշխատանքները ուղղված են Մերձավոր ու Միջին Արևելքի ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումների, Արևելքի հայ գաղութների պատմության, արաբական ժողովուրդների, Իրանի, Թուրքիայի գրակա-

նության ու լեզվի առանձին հարցերի ուսումնասիրությանը, հայերի և Հայաստանի մասին արևելյան աղբյուրների և Արևելքի ժողովուրդների մասին հայկական աղբյուրների գիտական մշակմանը:

Կոմունիստական հասարակական հարաբերությունների ձևավորման ու զարգացման, նոր հասարակարգը կառուցող մարդու բազմակողմանի դաստիարակման, աշխատավորության հոգևոր կյանքի հարստացման ուղղությամբ հսկայական դեր են կատարում գրականությունը, արվեստը, էսթետիկան, էթիկան: Գրականագետների և արվեստագետների խնդիրն է մարքս-լենինյան մեթոդոլոգիայով հետազոտել և ընդհանրացնել հայ ժողովրդի հոգևոր մշակույթի դարերի խորքից եկած հարուստ ժառանգությունը, ինչպես նաև ետհոկտեմբերյան ժամանակաշրջանի սովետահայ գրողների, նկարիչների, երաժիշտների, հարտարապետների՝ սոցիալիստական ռեալիզմի ու լենինյան կուսակցականության սկզբունքներով երկնած ստեղծագործությունները: Այս ուղղությամբ լուրջ գործունեություն են ծավալել ակադեմիայի գրականության, արվեստագիտության ինստիտուտներում: Այսուհետև ևս Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի ուշադրության կենտրոնում պետք է լինեն՝ արդի ժամանակաշրջանում, սովետահայ ինչպես նաև հայ հին, միջնադարյան և XIX դ. գրականության օրինաչափությունների բացահայտումը, մարքս-լենինյան գրականագիտության, տեսության մշակումը, հայ դասական գրողների երկերի գիտական հրատարակությունը, գրական կապերը և այլն:

Արվեստի ինստիտուտի գիտահետազոտական աշխատանքները ընթանում են երաժշտության, հարտարապետության, կերպարվեստի, թատրոնի և կինոյի պատմության, մշակութային կապերի, կիրառական արվեստի ու շեքսպիրագիտության պատմության և տեսության պրոբլեմների գիտական մշակման ուղղությամբ:

Գիտական լուրջ հետազոտություններ են կատարվել նաև ժողովրդական երաժշտության, հայ կերպարվեստի, թատրոնի, կինոյի պատմության, մշակութային կապերի, կիրառական արվեստի, շեքսպիրագիտության և այլ բնագավառներում: Այս պրոբլեմները այսուհետև ևս առավել խոր պիտի մշակվեն:

Հայ ժողովրդի մշակույթի պատմության մեջ կարևոր տեղ է գրավում նաև հայոց լեզվի ուսումնասիրության պրոբլեմը: Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի լեզվաբանների ուշադրության կենտրոնում է հայոց լեզվի կառուցվածքի, պատմական զարգացման օրինաչափությունների, հայ բարբառների և այլ պրոբլեմների ուսումնասիրումը, որոնց մասին հրապարակվել են մի շարք մենագրություններ:

Հասարակական գիտությունների կարևորագույն խնդիրներից է սիստեմատիկ, հարձակողական պայքար մղել հակակոմունիզմի դեմ, բացահայտել ժամանակակից բուրժուական փիլիսոփայության, սոցիոլոգիայի, պատմագրության, իրավագիտության, տնտեսագիտության սնանկությունը, դիմակազերծ անել մարքսիզմ-լենինիզմի գաղափարների, հասարակության զարգացման պատմության, կոմունիստական և բանվորական շարժման կեղծարարներին, ֆաշիստական պայքար մղել ռևիզիոնիզմի, դոգմատիզմի, ազգային սահմանափակվածության դրսևորումների և այլ երևույթների դեմ: Որպեսզի հարձակողական պայքար մղել հակակոմունիզմի դեմ, հարկավոր է մարքս-լենինյան տեսանկյունով ուսումնասիրել և վերլուծել ժամանակակից կապիտալիզմը:

Հասարակական գիտությունների մասին ՍՄԿԿ Կենտկոմի որոշման մեջ ցույց են տրված նաև գոյություն ունեցող թերությունները: Մասնավորապես նշված է, որ դեռևս խորը և կոմպլեքսային կերպով չեն մշակվում սոցիալիզմի քաղաքատնտեսության տեսության, հասարակական արտադրության շահավետության բարձրացման, ներկա էտապում տնտեսական քաղաքականության իրականացման հարցերը: Քիչ ուշադրություն է դարձվում քնագիտության նորագույն նվաճումների փիլիսոփայական ընդհանրացումների որակի և խորության, սոցիալական հոգեբանության, կոմունիզմի կառուցման ժամանակաշրջանում սոցիալիստական դեմոկրատիայի զարգացման պրոբլեմների ուսումնասիրության վրա: Անբավարար խորությամբ է ուսումնասիրվել կուսակցության պայքարը մենշևիկների, տրոցկիստների, աջ օպորտունիստների, նացիոնալ-ուկլոնիստների և այլ թշնամական խմբերի ու հոսանքների դեմ:

Հասարակական գիտությունների առաջնահերթ խնդիրներից է՝ խոր և բազմակողմանիորեն ուսումնասիրել և ընդհանրացնել բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքի ամրապնդման, ժողովուրդների բարեկամության, լենինյան ազգային քաղաքականության կիրառման փորձը, սոցիալիստական հեղափոխության օբյեկտիվ և սուբյեկտիվ նախադրյալները, կոմունիստական կուսակցության դերը Հոկտեմբերյան սոցիալիստական հեղափոխության հաղթանակի, մեր երկրում սոցիալիզմի կառուցման և կոմունիզմի նյութատեխնիկական բազայի ստեղծման համար մղած պայքարում: Պատմագրության սրբազան պարտքն է բազմակողմանիորեն հետազոտել և ընդհանրացնել հասարակական հարաբերությունների կատարելագործումը, բանվոր դասակարգի և կոլտնտեսային գյուղացիության 50 տարում ձեռք բերած հաջողությունները, հասարակության սոցիալական կառուցվածքային փոփոխությունները, սոցիալիզմից կոմունիզմին անցնելու ժամանակաշրջանի հասարակական, քաղաքական տեղաշարժերը:

Կուսակցությունը հասարակական գիտությունների ուշադրությունն է հրավիրում խորը և բազմակողմանիորեն զբաղվել ազգային հարցի ուսումնասիրմամբ: Ազգային պրոբլեմը այժմ համարվում է գաղափարական սուր պայքարի առարկա: Նացիոնալիզմը՝ իմպերիալիզմի ամենավտանգավոր զենքերից մեկը, այժմ հանդես է գալիս աշխատավորության ազգային-ազատագրական շարժումը քայքայելու դերում: Ահա թե ինչու մեր հասարակագետների՝ փիլիսոփաների, տնտեսագետների, պատմաբանների և մյուս մասնագետների խնդիրն է ավելի հիմնավորված ուսումնասիրել ինտերնացիոնալիզմի, ազգայինի և ինտերնացիոնալիզմի միասնության, սոցիալիստական երկրների համագործակցության, ժողովուրդների բարեկամության հարցերը: Սովետական Միության բազմազգ ժողովուրդների, ազգային պետությունների կուռ միասնության, նրանց տնտեսական, քաղաքական և կուլտուրական նվաճումների ուսումնասիրման և ընդհանրացման օրինակով ցույց տալ ինտերնացիոնալիզմի պատմական հաղթանակը մեր երկրում:

Հասարակական գիտությունների մասին ՍՄԿԿ Կենտկոմի որոշման իրականացման նպատակով հասարակագետների առաջնահերթ խնդիրն է՝ իրենց գիտահետազոտական աշխատանքները վերակառուցել այդ որոշման պահանջներին համապատասխան: Անհրաժեշտ է կիրառել գիտահետազոտական աշխատանքների կազմակերպման, պլանավորման և կոորդինացման նոր ձևեր և մեթոդներ, հատուկ ուշադրություն դարձնել հետազոտությունների գաղափա-

ական հագեցվածության, նպատակասլացության վրա: Գիտական աշխատանքների ճիշտ պլանավորման և կոորդինացման միջոցով խուսափել մանրբեմայնությունից և կրկնողությունից:

Տնտեսագիտության, փիլիսոփայության, գիտական կոմունիզմի, պատմության, իրավունքի, էսթետիկայի և այլ հասարակական գիտությունների գիտնականների ուշադրությունը հրավիրել՝ հասարակության զարգացման արդիական հարցերի մասին ընդհանրացնող աշխատություններ ստեղծելու վրա, բարձրացնել հետազոտությունների գիտական մակարդակը:

Հասարակական գիտությունների մասին ՍՄԿԿ Կենտկոմի որոշումից ելնելով Հայաստանի գիտությունների ակադեմիայի հասարակական գիտությունների բաժանմունքի հիմնարկները վերանայել են իրենց գիտահետազոտական աշխատանքի պլանները: Թեմատիկ պլաններում արտացոլված են մարքս-լենինյան փիլիսոփայության, սոցիալիստական շինարարության, սոցիալիզմի քաղաքատնտեսության, պրոլետարական ինտերնացիոնալիզմի և այլ պրոբլեմների վերաբերյալ բազմաթիվ հարցեր: Այդ հարցերի թվում են՝ Սովետական Հայաստանի գյուղացիության պատմությունը, Անդրկովկասի ժողովուրդների համագործակցությունը, Սովետական Հայաստանի ինդուստրացման պատմությունը, կոմունիզմի մասին լենինյան ուսմունքի հումանիստական էությունը, ինդուստրիալ հասարակության բուրժուական տեսության քննադատությունը, ժամանակակից հայ գրականության զարգացման տենդենցներ, հայ գրականության կապերը ՍՍՀՄ ժողովուրդների գրականությունների հետ և այլն: Վերանայվել են նաև ակադեմիայի հրատարակչական պլաններ: 1969 թ. հրատարակչական պլաններում տեղ են գտել հայագիտության վերաբերյալ մի շարք պրոբլեմներ, հրատարակվելու են Վ. Ի. Լենինի ծննդյան 100-ամյակին և Հայաստանում սովետական կարգերի հաստատման 50-ամյակին նվիրված աշխատություններ:

Հասարակական գիտությունների բաժանմունքի ինստիտուտների նյութա-տեխնիկական բազան բարելավելու նպատակով ՀՍՍՀ ԳԱ նախագահությունը և հասարակական գիտությունների բաժանմունքը միջոցառումներ են ձեռնարկել գիտական հիմնարկների լաբորատորիաներն ու կաբինետները համապատասխան սարքավորումներով համալրելու համար:

Տնտեսագիտության ինստիտուտում վերակառուցվել և ընդլայնվել է մաթեմատիկական մեթոդներով տնտեսական հետազոտությունների բաժինը, որի կարիքների համար ձեռք է բերված էլեկտրոնային հաշվիչ մեքենա:

Փիլիսոփայության և իրավունքի սեկտորում ստեղծվում է սոցիոլոգիայի լաբորատորիա, որի խնդիրն է կոնկրետ սոցիոլոգիական հետազոտություններ կատարել Հայաստանի բանվոր դասակարգի, գյուղացիության կյանքում տեղի ունեցած տեղաշարժերի, սոցիալիստական հասարակական հարաբերությունների և սոցիալական այլ հարցերի վերաբերյալ:

Սովետական ժողովուրդը, աշխարհի առաջադեմ մարդկությունը նախապատրաստվում են նշելու սովետական պետության ստեղծող, համաշխարհային պրոլետարիատի առաջնորդ Վլադիմիր Իլյիչ Լենինի ծննդյան 100-ամյակը: Սովետական գիտնականների, մասնավորապես, հումանիտար գիտությունների աշխատողների սրբազան պարտքն է՝ արժանավայել դիմավորել մեծ առաջնորդի այդ նվիրական հոբելյանը: